# ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՉՄԻՑ

Ներկա ժողովածուն բազմավաստակ ժողովրդագետ Սահակ Մովսիսյանի (Բենսե) ազգագրական-բանահյուսական, մեծ մասամբ, անտիպ. ժառանգության մի ստվար մասն է կազմում։

Այն ընդգրկում է Ս. Մովսիսյանի գրական-բանահավաքչական գործունեության սկզբնավորումից (XIX դարի վերջերից) մինչև իր կյանքի ավարտը (1939 թ.) գրած ու գրառած Բուլանըխի (պատմական Հարք) գավառի պատմա-ազգագրական, բանահյուսական նյութերը, մի քանի ազգագրական մանր հետազոտություններ։

Ընդ որում, հավելվածի կարգով ժողովածուում դետեղվել է նաև Մշո բարբառով գրած հեղինակի թատերգություններից մեկը՝ «Մշո հարսնիք»-ը, որն ունի ազգագրական-կենցաղագրական արժեք։ «Ազգագրական» բաժնի նյութերը, բացառությամբ մի քանիսի, նպատակադրված հավելումներ և լրացումներ են հեղինակի 1901 թ. «Ազգագրական հանդես»-ում տպագրած «Բուլանըխ կամ Հարք գավառ» աշխատության, որ Ս. Մովսիսյանը 1930-ական թվականներին կամեցել է հիշյալ նյութերով համալրված վերահրատարակել, սակայն այդ մտադրությունը, հեղինակի վերահաս մահվան պատճառով, մնացել է չիրագործված։

Անկախ տվյալ նյութերի լրացուցիչ բնույթից, դրանք բավականաչափ ամբողջական պատկերացում են տալիս Բուլանըխի հայության բնակարանի, ամուսնա-ընտանեկան, ծիսա-կենցաղային, սոցիալ-դասային ու վարչական հարաբերությունների, գավառի տեղադրության, բուսական և կենդանական աշխարհի, աշխարհագրական անունների, անձնանունների և գավառական բառերի մասին, դրանով իսկ՝ ակնհայտ գիտական արժեք ու հետաքրքրություն ներկայացնում։

Առավել ստվար է ու հարուստ «Բանահյուսական» բաժինը, ուր ընդգրկված են բանահավաքի տարբեր ժամանակներում Մշո բարբառով գրառած զանազան երգեր, առակներ և բանահյուսական տարբեր ժանրերի ստեղծագործություններ։

*Ժողովածուն կազմել և հրատարակության է պատրաստել Ս. Մովսիսյանի որդին՝ բանաստեղծ Սողոմոն Տարոնցին, այն օժտել է առաջաբանով, ծանոթագրություններով և բարբառային բառերի բացատրական բառարանով։*

*«Հայ ազգագրություն և բանահյուսություն (նյութեր և ուսումնասիրություններ)» մատենաշարով հրատարակության հանձնարարելով ներկա ժողովածուն, ինստիտուտը գիտական շրջանառության մեջ է դնում Մշո աշխարհի հայության մոտակա անցյալի նյութական ու հոգևոր կյանքի տարբեր կողմերը լուսաբանող ժողովրդագիտական հարուստ ու բազմազան նյութեր, որով իսկ նպատակ ունի իրավամբ հավերժացնելու երախտավոր ժողովրդագետ Սահակ Մովսիսյանի աղնիվ հիշատակը։*

**ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ**
**ԻՆՍՏԻՏՈՒՏ**